600.0229.31.05.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մայիսի 2017 թվականի №229Ա

քաղ. Երևան

«ԺՈՒԼԺ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2007 թվականի հուլիսի 13-ի №304Ա որոշմամբ «ԺՈՒԼԺ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) տրամադրվել է ռադիոհաճախականությունների օգտագործման №0155, 2008 թվականի նոյեմբերի 26-ի №650Ա որոշմամբ՝ №0482 և 2011 թվականի հոկտեմբերի 26-ի №506Ա որոշմամբ՝ №0961 թույլտվությունները,

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17.1-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարը սահմանվում է տարվա համար և ենթակա է վճարման յուրաքանչյուր եռամսյակի համար հավասարաչափ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ, իսկ 10-րդ մասի համաձայն՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների գումարների վճարումն Օրենքով սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում գանձվում է տույժ՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար պակաս վճարված վճարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար,

գ) ընկերությունը 2016 թվականի հուլիսի 1-ից չի վճարել ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարները, ինչի մասին բազմիցս տեղեկացվել է, այդ թվում՝ Հանձնաժողովի 2016 թվականի հոկտեմբերի 5-ի №ԱԲ-1950Հ, 2017 թվականի հունվարի 10-ի №ԱԲ-002Հ և ապրիլի 4-ի №ԱԲ-792Հ գրություններով,

դ) ընկերության կողմից Օրենքի 17.1-րդ հոդվածի պահանջների խախտման՝ ռադիոհաճախականությունների օգտագործման վճարների չվճարման փաստի ուսումնասիրության նպատակով 2017 թվականի մայիսի 4-ին Հանձնաժողովը վերջինիս

նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի մասին ծանուցել է 2017 թվականի մայիսի 4-ի №ԱԲ-1109Հ գրությամբ,

ե) ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում ուսումնասիրվող հարցի կապակցությամբ որևէ փաստարկ կամ հիմնավորում չի ներկայացրել,

զ) Հանձնաժողովի աշխատակազմի կողմից իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ ընկերությունը խախտել է Օրենքի 17.1-րդ հոդվածի պահանջները և մինչ օրս չի կատարել ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժի վճարման պարտավորությունը, որը 2016 թվականի հուլիսի 1-ից մինչև 2017 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածի համար կազմում է 756 889 (յոթ հարյուր հիսունվեց հազար ութ հարյուր ութսունինը) դրամ, որից 600 000 (վեց հարյուր հազար) դրամը ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 156 889 (հարյուր հիսունվեց հազար ութ հարյուր ութսունինը) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը, և՝

հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը, 17.1-րդ հոդվածի 11-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել №0155, №0482 և №0961 թույլտվություններով նախատեսված ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների մասով 2016 թվականի հուլիսի 1-ից մինչև 2017 թվականի մայիսի 31-ը հաշվարկված 756 889 (յոթ հարյուր հիսունվեց հազար ութ հարյուր ութսունինը) դրամ պարտքը, որից 600 000 (վեց հարյուր հազար) դրամը ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 156 889 (հարյուր հիսունվեց հազար ութ հարյուր ութսունինը) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը:
2. Ընդունել ի գիտություն, որ ընկերությունն իրավասու է՝

   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսուն օրվա ընթացքում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.

   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
31 մայիսի 2017թ.